


«Հ բանկային համակարգի 2008 թ.-ի 1-ին եռամսյակի գործունեության համառոտ վերլուծությունը»

«Հ բանկային համակարգի 2008 թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում գործունեության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հաշվետու եռամսյակում աճ է գրանցվել գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով: Այսպես, համակարգի ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում աճել են 4.6 %-ով կամ 36.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 818.9 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվները ավելացել էր 27.7 մլրդ դրամով: Ընդհանուր ակտիվների վերը նշված աճը հիմնականում իր արտացոլումն է գտել ֆիզիկական անձանց և տնտեսությանը տրամադրված վարկերում:

Վարկային ներդրումները 1-ին եռամսյակի ընթացքում ավելացել են 12.8 %-ով կամ 54.6 մլրդ դրամով, իսկ ներդրումները արժեթղթերում՝ 5.3 %-ով կամ 5.0 մլրդ դրամով և տարեվերջին կազմել համապատասխանաբար 481.8 և 100.1 մլրդ դրամ, ընդ որում անցած տարվա առաջին եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էին 6.4 %-ով կամ 16.3 մլրդ դրամով, իսկ ներդրումները արժեթղթերում՝ 8.5 %-ով կամ 7.7 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ նախորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 15.7 %-ով կամ 58.0 մլրդ դրամով, ներդրումներն արժեթղթերում նվազել՝ 3.7 %-ով կամ 3.6 մլրդ դրամով: 2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 58.8 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 48.8 %-ը կամ 234.9 մլրդ դրամ, և այս ցուցանիշը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 12.7 %-ով կամ 26.6 մլրդ դրամով, որը 2007 թ.-ի 1-ին եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 4.5 տոկոսային կետով կամ 15.7 մլրդ դրամով: Միաժամանակ նշենք, որ 2.2 տոկոսային կետով կամ 6.8 մլրդ դրամով գերազանցվել է նաև նախորդ եռամսյակի համանուն ցուցանիշը:

2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ վարկերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը հաշվետու եռամսյակում կազմել է 15.7 % կամ 32.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի նույնանուն ցուցանիշը գերազանցել է 93.0 %-ով կամ 15.6 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 49.8 %-ը կամ 239.9 մլրդ դրամ, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 179.4 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 59.9 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալը աճել է 40.0 %-ով կամ 51.2 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 10.9 %-ով կամ 5.9 մլրդ դրամով, ընդ որում 2007 թ.-ի 1-ին եռամսյակում վերը նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 7.8 % կամ 5.8 մլրդ դրամ և 14.2 % կամ 3.3 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ նշենք, որ սպառողական վարկերը կազմել են ընդհանուր վարկային ներդրումների 37.2 %-ը, իսկ հիփոթեքային վարկերը՝ 12.4 %-ը:

Հաշվետու եռամսյակի վերոնշյալ վարկային ցուցանիշների աճերը համեմատելով նախորդ տարվա IV եռամսյակի համանուն ցուցանիշների աճերի հետ՝ կարող ենք արձանագրել, որ տեղի է ունեցել որոշ ցուցանիշների աճերի անկում: Այսպես օրինակ՝ ընդհանուր վարկերի աճը նվազել է 5.9 %-ով կամ 3.4 մլրդ դրամով, ֆիզիկական անձանց վարկերի աճը՝ 9.6 %-ով կամ 3.4 մլրդ դրամով, իսկ հիփոթեքային վարկերի աճը՝ 25.9 %-ով կամ 2.2 մլրդ դրամով:


Առաջին եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվների ամենաբարձր տոկոսային աճը գրանցվել է «Հայներարտբանկ»-ի մոտ՝ 55.8 %, որը դրամական արտահայտությամբ կազմել է մոտ 7.6 մլրդ դրամ, իսկ ամենաշատ նվազումը՝ «ԲՏԱ Ինվեստբանկ»-ի մոտ 17.6 % կամ 3.1 մլն դրամ: Սակայն պետք է նշել, որ բացարձակ մեծությամբ ընդհանուր ակտիվների առավելագույն աճ ապահովվել է «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ի կողմից և այն կազմել է 14.8 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Արդշինինվեստբանկ»-ը՝ 10.8 մլրդ դրամ, իսկ առավելագույն նվազում գրանցվել է «Հայէկոնոմբանկ»-ի մոտ՝ 7.2 մլրդ դրամ:

Տնտեսությանը վարկավորման ամենամեծ ծավալներն ապահովել են՝ Արդշինինվեստբանկը՝ 39.0 մլրդ դրամ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 31.4 մլրդ դրամ, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 24.0 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ը՝ 22.3 մլրդ դրամ և «Կոնվերս Բանկ»-ը՝ մոտ 17.5 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց վարկավորման գծով առաջատար դիրքերում են գտնվում «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ը՝ 41.0 մլրդ դրամով, «Արդշինինվեստբանկ»-ը՝ 31.0 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 27.2 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 21.3, «Յունիբանկ»-ը՝ 17.3 մլրդ դրամով և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 14.7 մլրդ դրամով: Համակարգում հիփոթեքային վարկերի գծով առաջին հնգյակում են՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 18.3 մլրդ դրամով, որը կազմել է համակարգի հիփոթեքային վարկային պորտֆելի 30.5 %-ը, «Յունիբանկ»-ը՝ 8.9 մլրդ դրամով (14.9 %-ը), «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 6.3 մլրդ դրամով (10.5 %-ը), ընդ որում առաջին եռամսյակում «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ն ապահովել է նաև հիփոթեքային վարկերի ծավալի ամենամեծ աճը, որը բացարձակ մեծությամբ կազմել է 1.3 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ը՝ 2.8 մլրդ դրամով (4.6 %-ը) և «Կոնվերս Բանկ»-ը՝ 2.8 մլրդ դրամով (4.6 %-ը):

Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից առավելագույն ներդրումներն ունեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 17.3 մլրդ դրամ և «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 11.0 մլրդ դրամ:


ՀՀ բանկային համակարգի ակտիվները և վարկային ներդրումները
2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ

Մլրդ դրամ



2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 635.4 մլրդ դրամ, որը 1-ին եռամսյակում աճել է 2.8 %-ով կամ 17.4 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ վերոնշյալ ցուցանիշը անցած տարվա նույն եռամսյակում աճել էր 4.7 %-ով կամ 19.9 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների եռամսյակային աճը պայմանավորված է նաև բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների 7.5 % կամ 9.7 մլրդ դրամի չափով ավելացումով: Տեղին է նշել, որ հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) նվազել են 1.4 %-ով կամ 2.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 195.6 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 32.8 %-ը, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդները նվազել են մոտ 12.6 մլրդ դրամով կամ 18.5 %-ով: Համակարգի իրավաբանական անձանց համախառն ավանդները մարտի 31-ի դրությամբ կազմել են 226.1 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 35.6 %-ը, եռամսյակի ընթացքում գրանցվել է 8.4 %-ի կամ 20.8 մլրդ դրամի չափով նվազում, ընդ որում իրավաբանական անձանց ցպահանջ ավանդները նվազել են 13.6 %-ով կամ 20.1 մլրդ դրամով, իսկ ժամկետային ավանդները՝ 0.8 %-ով կամ 0.8 մլրդ դրամով: Վերոնշյալին միայն ավելացնենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներն ավելացել էին 3.8 %-ով կամ 2.2 մլրդ դրամով, իսկ ժամկետային ավանդները՝ 1.2 %-ով կամ 1.0 մլրդ դրամով:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)




■ Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ ■ Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
■ Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ ■ Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Միաժամանակ արձանագրենք, որ եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց համախառն ավանդների (ցպահանջ և ժամկետային) առավելագույն ծավալ գրանցվել է «Յունիբանկ»-ի կողմից՝ 32.0 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշն ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 27.0 մլրդ դրամով, իսկ երրորդը՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ը՝ 21.0 մլրդ դրամով, ընդ որում ժամկետային ավանդների գծով ամենամեծ ծավալ ապահովել է «Յունիբանկ»-ը՝ 29.4 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը պատկանում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ին՝ 21.2 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկ»-ին՝ 16.2 մլրդ դրամ:

Առաջին եռամսյակի կտրվածքով ցպահանջ պարտավորությունների ամենամեծ աճ արձանագրվել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ը-ի մոտ՝ 62.6 % կամ 5.2 մլրդ դրամ, իսկ նվազում՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ի մոտ՝ 50.6 % կամ ցպահանջ պարտավորությունները նվազել են 26.0 մլրդ դրամով: Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը ՝ 49.1 մլրդ դրամով, այնուհետև նրան հաջորդում են «Արդշինինվեստբանկ»-ն՝ 35.3 մլրդ դրամով, «Յունիբանկ»-ը՝ 33.3 մլրդ դրամով, «Կոնվերս Բանկ»-ը՝ 17.5 մլրդ դրամով և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ը՝ 14.2 մլրդ դրամով: Եռամսյակային կտրվածքով վերոնշյալ ցուցանիշի ներգրավման լավագույն արդյունք ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը, որը բացարձակ մեծությամբ կազմում է 22.7 մլրդ դրամ:

ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները
 (ցպահանջ և ժամկետային) 2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ

Սլոդ դրամ



ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը սույն թվականի 1-ին եռամսյակի ընթացքում աճել է 10.5 %-ով կամ 17.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 183.5 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն եռամսյակի ընթացքում աճել էր 6.4 %-ով կամ մոտ 7.7 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից մեկը՝ կուտակված շահույթը, սույն տարվա 1-ին եռամսյակի ընթացքում աճել է 15.0 %-ով կամ մոտ 6.0 մլրդ դրամով՝ եռամսյակի վերջում կազմելով մոտ 45.7 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 24.9 %-ը, ընդ որում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի ընթացքում կուտակված շահույթը ավելացել էր 15.7 %-ով կամ 4.5 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 9.6 %-ով կամ 10.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 121.3 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 66.1 %-ը: Համեմատության նպատակով նշենք, որ 2007 թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում կանոնադրական կապիտալը ավելացել էր 3.5 %-ով կամ 2.8 մլրդ դրամով:

Կուտակված շահույթի ցուցանիշով առաջատարը «Էլե-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ն է 9.6 մլրդ դրամ գումարով, բանկը 2008 թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում ապահովել է 9.6 %-ի աճ: Նրան անմիջապես հաջորդում են՝ «Կոնվերս Բանկ»-ը՝ 7.8 մլրդ դրամով (աճը 10.3 %) և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 5.8 մլրդ դրամով (աճը 2.1 %): Հաշվետու եռամսյակի կտրվածքով կուտակված շահույթի նշանակալից աճ ապահովել է «Արդշինհինվեստբանկ»-ը՝ 1.2 մլրդ դրամով:


Հաշվետու եռամսյակի ընթացքում համակարգի բանկերից կանոնադրական կապիտալը համարել են երկու բանկ՝ «Հայնեոարտբանկ»-ը՝ 216.9 %-ով կամ 4.4 մլրդ դրամով և «Արարատբանկ»-ը՝ 12.4 %-ով կամ 0.5 մլրդ դրամով:

2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ, ըստ ընդհանուր կապիտալի մեծության, առաջին հնգյակը կազմել են «ԱԿԲ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 22.2 մլրդ դրամով, «ՎՏԲ

Հայաստան Բանկ»-ը՝ 21.4 մլրդ դրամով, «Արդշինհիմնվեստբանկ»-ը՝ 19.8 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 12.6 մլրդ դրամով և «Կոնվերս Բանկ»-ը՝ 11.6 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի ընթացքում տոկոսային արտահայտությամբ ընդհանուր կապիտալի ամենաբարձր աճ է ապահովել «Հայներարտբանկ»-ը՝ 128.8 %, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 18.8 %, իսկ երրորդը՝ «Արարատբանկ»-ը՝ 10.8 %:

«Հ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը 2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ

Մլրդ դրամ



«Հ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 6.15 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2007 թ.-ի 1-ին եռամսյակում ստացված մաքուր շահույթի ծավալը գերազանցել է 1.4 մլրդ դրամով կամ 29.3 %-ով, իսկ չորրորդ եռամսյակինը՝ 1.75 մլրդ դրամով կամ 39.8 %-ով: Կարելի է արձանագրել, որ համակարգի երեքը բանկեր եռամսյակը փակել են վնասով և ընդհանուր վնասը կազմել է 375.8 մլն դրամ: Ընթացիկ տարվա 1-ին եռամսյակի ընթացքում ստացված մաքուր շահույթի գծով նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ աննախատեսյ արձաշնթաց է արձանագրվել «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ի, «Կոնվերս Բանկ»-ի, «Արարատբանկ»-ի և «Պրոմեթեյ բանկ»-ի կողմից: Այսպես, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ի կողմից 1-ին եռամսյակի ընթացքում ապահովված մաքուր շահույթի ծավալը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշը գերազանցել է մոտ 4 անգամ, իսկ մյուս բանկերի մաքուր շահույթի ցուցանիշները՝ մոտ 3 անգամ: Միևնույն ժամանակ փաստենք, որ 1-ին եռամսյակի


ընթացքում համակարգի բանկերից մաքուր շահույթի առավելագույն ծավալ ապահովել է «Արդշինինվեստբանկ»-ը՝ 1300.4 մլն դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշը գերազանցել է 354.0 մլն դրամով կամ 37.4 %-ով: Միևնույն ժամանակ նշենք, որ 1-ին եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 35.2 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 27.4 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 11.3 մլրդ դրամով կամ 47.1 %-ով և 9.3 մլրդ դրամով կամ 51.5 %-ով: Հարկավոր է նաև նշել, որ հաշվետու եռամսյակում համակարգի հաշվեկշռային շահույթը կազմել է 7.8 մլրդ դրամ, որը մոտ 2.0 մլրդ դրամով կամ 33.5 %-ով գերազանցել է նախորդ տարվա 1-ին եռամսյակի հաշվեկշռային շահույթի մեծությունը: Ասվածին նաև ավելացնենք, որ հաշվետու եռամսյակի ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը «Արդշինինվեստբանկ»-ն է՝ համապատասխանաբար 6.78 և 5.15 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես ապահովել է «Արդշինինվեստբանկ»-ը՝ մոտ 1.63 մլրդ դրամ, երկրորդ տեղում է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 3.97, 2.83 և 1.14 մլրդ դրամով և երրորդ տեղում՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը համապատասխանաբար 3.09, 2.28 և 0.81 մլրդ դրամով:

2008 թ.-ի 1-ին եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, մարտի 31-ի դրությամբ կազմել է 3.31 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.75 %: Պետք է արձանագել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության անկում անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն նվազել է 0.37 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.08 տոկոսային կետով:

Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքը եռամսյակի վերջում ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 6.66 %, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ «Մելլաթ բանկ»-ը՝ 1.5 %, ընդ որում նախորդ տարվա 1-ին եռամսյակի նույն ժամկետի համեմատ կապիտալի եկամտաբերության ամենաբարձր աճը ապահովվել է «Կոնվերս Բանկի» կողմից, որը կազմել է 3.52 տոկոսային կետ, իսկ ակտիվների շահութաբերության գծով՝ «Մելլաթ բանկ»-ի կողմից՝ 0.95 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշների գծով տեղեկությունները ըստ բանկերի արտացոլված են աղյուսակ 1-ում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2008 թ.-ի մարտի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը առաջին եռամսյակի ընթացքում և բանկերի գրավված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Գ/Գ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր		
		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ
					Վարկ- ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ավանդ	աճ/ նվազ (%)			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Արդշինհիմնվեստբանկ	104593,6	11,5	1	69980,7	17,8	84747,3	12,6	2	16188,4	9,0	19846,3	7,0	3
2	Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	101117,8	-3,2	2	58577,3	13,5	88493,7	-5,7	1	21205,3	-5,7	12624,1	18,8	4
3	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ	85783,6	6,8	3	65211,1	16,7	63632,6	7,8	3	11160,9	2,6	22151,0	4,2	1
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	84851,9	21,1	4	45350,0	9,6	63466,8	28,5	4	9251,1	-1,8	21385,1	3,3	2
5	Կոնվերս Բանկ	56162,8	-4,4	5	31524,7	4,8	44571,4	-6,7	5	8007,1	0,1	11591,3	5,8	5
6	Յունիբանկ	51755,2	13,5	6	31138,0	5,2	44146,9	14,4	6	29430,5	23,4	7608,3	8,5	9
7	Հայէկոնոմբանկ	43230,3	-14,3	7	25161,8	-11,7	34594,5	-17,5	7	3808,5	-26,8	8635,8	1,8	6
8	Ինտերբանկ	36877,3	3,0	8	23338,2	11,7	29783,3	2,7	8	8522,1	9,3	7094,1	4,5	10
9	Անելիք Բանկ	34393,5	7,1	9	17882,9	9,6	28857,6	8,1	9	6884,2	19,4	5535,9	2,2	13
10	Հայբիզնեսբանկ	29090,8	-12,3	10	17413,0	8,9	22777,7	-15,9	10	8160,9	64,5	6313,1	3,6	11
11	Արարատբանկ	26200,8	-5,6	11	11009,2	18,8	21091,1	-8,9	11	1013,9	-29,0	5109,7	10,8	15
12	Արցախբանկ	23167,5	3,8	12	16178,3	20,5	18521,2	4,2	13	2274,0	13,9	4646,3	2,0	18
13	ԱրմսվիսԲանկ	23030,9	6,4	13	5451,7	5,5	19075,8	7,5	12	1228,1	1,7	3955,2	1,1	19
14	Հայնտերարտբանկ	21141,9	55,8	14	8506,3	114,1	13269,4	31,0	15	880,3	146,1	7872,5	128,8	8
15	Առէկսիմբանկ	19568,1	-6,1	15	11874,5	16,4	15943,0	-7,9	14	6021,9	-2,2	3625,1	2,7	21
16	ԲՏԱ Ինվեստբանկ	14731,7	-17,6	16	10707,7	-12,9	9550,8	-23,7	16	529,8	-18,6	5180,9	-3,5	14
17	Պրոմեթեյ Բանկ	14320,6	6,9	17	7994,8	31,8	5962,1	13,8	20	782,5	56,8	8358,5	2,4	7
18	Մելլաթ Բանկ	12794,0	13,3	18	6562,7	64,0	9025,1	22,5	17	143,8	1,0	3768,9	-3,9	20

19	Զարգ. Հայկական Բանկ	12653,7	-9,4	19	7846,3	22,6	7878,1	-15,0	18	2569,8	-11,8	4775,6	1,5	17
20	Կասկադ Բանկ	11690,2	6,5	20	6164,7	31,0	6662,0	11,0	19	807,9	2,6	5028,2	1,1	16
21	ՊրոԿրեդիտ Բանկ	6306,6		21	1388,1		947,0		22	198,2		5359,6		12
22	Բիբլոս Բանկ Հայաստան	5439,9	-7,5	22	2492,2	24,6	2447,9	-15,5	21	1049,6	1,7	2992,0	0,3	22
	Ընդամենը	818902,7	4,4		481754,2	12,8	635445,3	2,8		140118,8	7,5	183457,5	10,5	